

15925 քառակուսի վերստ Առաջ ունեցել է մօտ 60 հազար ընտանիք, իսկ 1833 թ. արած մի վիճակագրութեամբ ծխերի թիւն էր 20546, իսկ աղամարդկանց թիւը 54841, ուրեմն մօտաւորապէս ունէր 100000 բնակիչ: Գիւղերի թիւն էր մօտ 741¹⁾: Հօտ այս նոյն վիճակագրութեան հայերը կազմում էին աղգարնակութեան $\frac{1}{5}$ -ը, քրդերը $\frac{1}{7}$ -ը, իսկ մնացածը կազմում էին թուրքերը: Պաշտօնեաներն և ընդհանրապէս արտօնեալները կազմում էին մօտ 1190 ընտանիք (20456 ընտանիքից), հօգևորականներից կային 2 զազիններ, 7 էֆֆենդիներ և աստուաններ և 150 մուլաներ: Ղարաբաղի խանութիւնը իւր գոյութիւնը չարունակեց մինչև 1822 թուականը: Նա ունեցաւ մօտաւորապէս 75 տարուայ գոյութիւն, եթէ նրա սկիզբն ընդունենք 1747 թուականը: 1822 թ. նոյնաբերի 21-ին Ղարաբաղի Մեհտի-Ղուլի խանը փախչելով Պարսկաստան, Ղարաբաղի խանութիւնն այդ օրուանից միացուեց Ռուսաց պետութեան:

Հ. Մուսայէլեան

ՆՈՐ ԴԻՏԱԿԱՆ ԳԻՒՏ ՔՐԴՍԱՆՈՒՄ

Պրօֆեսոր Մ. Խփօստովը Բերլինից «Русскія Вѣдомости» թերթին ուղարկում է այս վերնագրով ուշագրաւ մի յօդուած՝ որ հնագիտական տեսակէտից հետաքրքրական լինելով թարգմանաբար բերում ենք այստեղ. «Հնագոյն քրիստոնէութեան յայտնի պատմարան պրօֆեսոր Դէյոմանը այս օրերս Բերլինի Հնագիտական Ընկերութեան մէջ արաւ նախնական հաղորդագրութիւն այն չափազանց հետաքրքրական գիւտի մասին՝ որ մօտիկ անցեալում եղել է Քրդստանում (Բաղդատից դէպի հիւսիս): Տեղացի զիւղացիներն այստեղ գտել են մի կաւէ անօթ, որի մէջ եղել է երեք գալարածոյ (պատատած) մազաղաթ: Նրանք իրենց գիւտը յանձնել են Պարսից մի բժշկի, որը վաճառել է (կամ գուցէ ընծայել է) այդ մազաղաթները մի անգլիացու, վերջինս էլ ուղարկել է Քեմբրիժ, որտեղ և այժմ գտնուում են այդ մազաղաթները: Այդ գալարածոյ մազաղաթներն եղել են փաստագրեր ժառանգական հողային կապալի: Փաստագրե-

1) Обзоръніе русскихъ владѣній за Кавказомъ, часть III 1836 г.

ըից մէկը զրուած է յունարէն, միւսը — յունարէն և պահ-
լաւերէն, իսկ երրորդը միայն պահլաւերէն (այս վերջին
փաստագիրն դժուարութեամբ է կարգացուած)։ Առաջին
երկուսի բնագիրը վերագրուած են 88 և 22 թուերին Գրիս-
տոսից առաջ (այդ թիւը համեմատ է Արշակունիների թա-
ղաւորութեան տարիներին)։

Այս գիւտը հետաքրքրական է զանազան կողմերից։
Առաջին նա կարող է լոյս սփռել այդ տեղերի հոլային հար-
ցի վրայ, որ այնքան քիչ բան գիտենք այդ շրջանի մասին,
գուցէ և այդ փաստագրերի ուսումնասիրութիւնը կը շո-
շափի և այն առեղծուածները, որոնց մասին մօտիկ ան-
ցեալուած այնքան հիմնաւոր և ինքնուրոյն կերպով ճշտուած
էր մեր հայրենակից Մ. Ի. Ռոստովցեմն իւր հոգովմէական
գաղթականութեան պատմութեան վերաբերեալ գերմանա-
կան աշխատութեան մէջ։ Էյլենական պատմաբանների և
լեզուագէտների համար հետաքրքրական է յունական քա-
ղաքակրթութեան կենդրոնից հեռու այդ հեռաւոր երկրի
յունական փաստագրերի հնագրութիւնը։

Բերլինի մասնագէտ դոկտոր Պլատման հաղորդել է ինձ,
որ նորա առաջին տպաւորութեամբ (Բերլինում ստացուած
են լուսանկար օրինակները վերոյիշեալ փաստագրերի) այդ
բնագրերի գիրը յիշեցնում է նգիպտոսից բերուած հնագւյն
Պտղոմեան շրջանի յունական փաստագրերի գիրը (համարեա
գլխաղիր)։ Ըստ երևոյթին, յունական արագագրութեան
զարգացումն այդ քիչ էյլենացած տեղերում ընթացել է
դանդաղ, քան թէ ուժեղ էյլենացած նգիպտոսում։

Բ. Վ. Ա.

ՄԱՋԴԻԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԱՐԴԻ ԵՒՐՈՊԱՅՈՒՄ

(Մազղագնան)

Շնորհիւ դաւանանքների ազատութեան ներդաշնակ աճում
բազմանում են զանազան տեսակի աղանդներ՝ սէկտաներ, մեթո-
դիստ, աւետարանական, ազգային եկեղեցի, և այլն, և այլն,.....
Այդ սէկտաներից մէկն էլ է Մազղաղնանը (մազղէականութիւն)
որ ուզում է լինել Զարաթուստրայի աւանդած իսկական կրօնը։